ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/55 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «26» օգոստոսի 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքեր-շինությունների պահպանման բաժնի պետ.

Անդամներ՝

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ,

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ,

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող:

Բացակայում է.

Արթուր Շահինյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ:

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և մասնակիցների կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ա/Ձ Վահրամ Կնյազյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

«Բազարանի Բարիք» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ ենթակետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն մասնակիցը ներկայացրել է Կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի ընօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը, ինչպես նաև ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընկերությունների կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակիցներ ճանաչել.

- Ա/Ձ Վահրամ Կնյազյանին՝ 1 չափաբաժնով,
- «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին ՝ 2 չափաբաժնով:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/55 ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Իրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Ա/Ձ Վահրամ Կնյազյանին և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝		Հ. Պողոսյան
Հանձնաժողովի անդամներ՝		Գ. Բոյաջյան
		Հ. Ծատուրյան
		Տ. Ալեքսանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Եղիազարյան